ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2025թ. թիվ 55-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԳՎՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ Ա.ՁԱՎԱՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի հունվարի 14-ի թիվ 21-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Ձավարյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Հագվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «ՀՀ Լոռու մարզի Հագվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Աշոտ Լևոնի Ձավարյանի վրա:

2. «ՀՀ Լոռու մարզի Հագվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Հագվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Աշոտ Ձավարյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Հագվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 31-ից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. հունվարի 31
ք.Վանաձոր